5 դեկտեմբերի 2019 թվականի N 1747 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԳԻՆԱՓ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1412-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1-ին, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ և 28-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակը լրացնել «Թուրքիա» բառով.

2) 14-րդ, 15-րդ և 31-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակը լրացնել «Չինաստան» բառով.

3) 18-րդ կետի «Ծագման երկիրը» սյունակը լրացնել «Եգիպտոս» բառով.

4) 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 16-րդ և 29-րդ կետերի «Ծագման երկիրը» սյունակը լրացնել «ԵՄ պետություններ» բառերով.

5) 32-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը» սյունակում «2106909804» ծածկագիրը փոխարինել «2106909809» ծածկագրով.

6) 7-րդ և 8-րդ կետերի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «Պոլիէստեր միաշերտ թափանցիկ թաղանթ՝ գլանափաթեթով, հաստությունը՝ 12-ից մինչև 30 միկրոն, նախատեսված է չիպսերի, սուրճի փաթեթավորման համար, օգտագործվում է տպագրության և լամինացիոն աշխատանքների մեջ: Պոլիէստեր թափանցիկ և գունավոր թաղանթներ, հաստությունը՝ 12-120 միկրոն» բառերը փոխարինել «Պոլիէստեր միաշերտ թափանցիկ և գունավոր թաղանթներ գլանափաթեթով, հաստությունը՝ 12-ից մինչև 120 միկրոն, նախատեսված է չիպսերի, սուրճի փաթեթավորման համար, օգտագործվում է տպագրության և լամինացիոն աշխատանքների մեջ» բառերով.

7) 43-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 44-51-րդ կետերով.

«

44.	3824999209	Հակասահքային հարակցանյութ՝ ներկերի մեջ կիրառելու համար	Հակասահքային հարակցանյութ, որոնք հանդիսանում են խառնուրդ տպագրական ներկերի համար, օգտագործվում է տպագրության մեջ:	կգ	300.0	ԵՄ պետություններ, Թուրքիա	450 000
45.	3920690000	Թաղանթ՝ պոլիէթիլենտերևտա-լատից	Արհեստական միաշերտ թափանցիկ և գունավոր թաղանթներ պոլիէթիլենտերևտալատից գլանափաթեթով, հաստությունը՝ 12-ից մինչև 600 միկրոն: Թաղանթն ունի ջերմաձևավորվող հատկություն, ըստ որի տաք ջերմաստիճանի տակ սեղմվում է պատրաստի տարաների՝ հանդիսանալով փաթեթավորում կամ պիտակ պատրաստի տարաների համար:	կգ	100.000	ԵՄ պետություններ, Թուրքիա, Պարսկաստան	85 000 000
46.	2912410000	Վանիլին	Վանիլինն օգտագործվում է հրուշակեղենի բնագավառում՝ թխվածքների, քաղցրավենիքի, կոնֆետների, պաղպաղակի, շոկոլադե սալիկների արտադրության մեջ:	կգ	10.000	Չինաստան, ԵՄ պետություններ	23 000 000
47.	3503001001	Ժելատին	Ժելատինն օգտագործվում է կաթնամթերքի, հրուշակեղենի բնագավառում՝ թխվածքների, քաղցրավենիքի, կոնֆետների, պաղպաղակի, շոկոլադե սալիկների արտադրության մեջ:	կգ	10.000	Չինաստան, ԵՄ պետություններ	18 000 000
48.	3201909000	Տանին	Տանինն օգտագործվում է խմիչքների, ինչպես նաև պահածոների արտադրության մեջ:	կգ	7.000	Չինաստան, ԵՄ պետություններ	16 000 000

49.	2918160000	Երկաթի գլյուկոնատ	Երկաթի գլյուկոնատը նախատեսված է պահածոների, ինչպես նաև զեյթունի մեջ օգտագործելու համար:	կգ	8.000	Չինաստան, ԵՄ պետություններ	12 000 000
50.	3912310000	Կարբոքսիլմեթիլցել-յուլոզա	Կարբոքսիլմեթիլցելյուլոզան օգտագործվում է կաթնամթերքի բնագավառում՝ թթվասերի, մայոնեզի, կաթնաշոռի արտադրության մեջ:	կգ	10.000	Չինաստան, ԵՄ պետություններ	14 000 000
51.	2923200000	Սոյայի լեցիտին	Սոյայի լեցիտինն օգտագործվում է հրուշակեղենի բնագավառում՝ թխվածքների, քաղցրավենիքի, կոնֆետների, պաղպաղակի, շոկոլադե սալիկների արտադրության մեջ:	կգ	12.000	Չինաստան, ԵՄ պետություններ	15 000 000

».

8) «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «8 972 000 000» թիվը փոխարինել «9 155 450 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ